

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Մեղա՛ Ամենասուրբ Երրորդությունը՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն: Մեղանչել եմ Աստծո դեմ: Խոստովանում եմ Աստծո, սուրբ Աստվածածնի և քո՛ առաջ հայր սուրբ, իմ գործած բոլոր մեղքերը, քանզի մեղանչեցի խորհրդով, խոսքով և գործով, կամա և ակամա, գիտակցելով և չգիտակցելով. մեղա՛ Աստծո:

Մեղանչեցի հոգովս և նրա զորությունը, մտքովս և նրա շարժմամբ, մարմնովս և նրա զգայարաններով: Մեղանչեցի հոգուս զորությունը՝ խորամանկությունը անզգամությունը, հանդգնությունը և երկչոտությունը, շռայլությունը և ժլատությունը, գեխությունը և անիրավությունը, չարահավանությունը, հուսահատությունը և թերամտությունը. մեղա՛ Աստծո:

Մեղանչեցի մտքիս չար խորհուրդներով՝ նենգությունը, ատելությունը, խեթ հայացքով, չար նախանձով, չարակամությունը, թուլությունը, պոռնկական խորհրդով՝ արվամոլական, իգամոլական, անասնական, գրաստական, գազանական, գիշերն ու ցերեկը երազական ցանկասիրությունը և անընկալ գարշելի աղտեղությունը. մեղա՛ Աստծո:

Մեղանչեցի մարմինս ցանկությունը՝ հեշտասիրությունը, պարապասիրությունը, քնկոտ հորանջմամբ, մարմնի շարժումներով ու պես-պես ախտերով պղծագործելով, չարին ականջալուր լինելով, աչքերիս արատասիրությունը, սրտիս ցանկությունը, ոնգերիս իգասիրությունը, բերանիս անպարկեշտությունը, անժուժկալությունը, շվայտությունը և հարբեցողությունը. մեղա՛ Աստծո:

Մեղանչեցի լեզվիս չարաբանությունը՝ ստախոսությունը, սուտ երդումով, երդում դրժելով, հակաճառությունը, վիճաբանությունը, բանսարկությունը, շողոքորթությունը, խոսք

տանել-բերելով, դատարկաբանությունը և ծաղրանքով, զրպարտելով, մոլորեցնելով, հերձվածողությունը, անիծելով, տրտնջալով, դժգոհելով, բամբասելով և հայհոյելով. մեղա՛ Աստծո:

Մեղանչեցի ձեռքերիս գողությունը, ազահությունը, զրկելով, հարվածելով, սպանելով և քաշքրտելով. մեղա՛ Աստծո:

Մեղանչեցի շինվածքիս ողջ կազմությունը, մարմնիս բոլոր անդամներով՝ հինգ զգայարաններովս և վեցյակ շարժումներովս, մեծամտությունը ոտնահարելով, ստորացնելով, աջ և ձախ խոտորվելով, առաջինների հանդեպ մեղանչելով և մյուսներին չար օրինակ լինելով. մեղա՛ Աստծո:

Այլև մեղանչեցի յոթ հանցանքների մահացու մեղքերով՝ հպարտությունը և նրա տեսակներով, նախանձով և նրա տեսակներով, բարկությունը և նրա տեսակներով, ծուլությունը և նրա տեսակներով, ազահությունը և նրա տեսակներով, որկրամոլությունը և նրա տեսակներով, պղծախոհությունը և նրա տեսակներով. մեղա՛ Աստծո:

Այլև մեղանչեցի Աստծո բոլոր պատվիրանների՝ հանձնառելիների և հրաժարելիների դեմ, որովհետև ո՛չ հանձնառելիները կատարեցի, ո՛չ էլ հրաժարելիներից հեռացա: Օրենքը ստացա, բայց օրինազանց եղա, քրիստոնեական կարգի մեջ հրավիրվեցի և գործերովս անարժան գտնվեցի, չարն իմանալով, կամովին շեղվեցի և բարի գործերից ես ինքս հեռացա. վա՛յ ինձ, վա՛յ ինձ, վա՛յ ինձ: Ո՞րն ասեմ կամ որը խոստովանեմ, քանզի անթիվ են իմ հանցանքները, անասելի են իմ անօրենությունները, աններելի են իմ ցավերը և անբժշկելի են իմ վերքերը. մեղա՛ Աստծո:

Հայր սուրբ, քեզ ունեմ որպես հաշտության միջնորդ և բարեխոս Աստծո Միածին Որդու մոտ, քեզ տրված իշխանությունը արձակի՛ր ինձ իմ մեղքերի կապանքներից. աղաչո՛ւմ եմ քեզ:

Ձ Ղ Ջ ՈՒ Մ

Մեղա՛յ Ամենասուրբ Երրորդութեանն՝ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Մեղուցեալ եմ Աստուծոյ:

Խոստովանիմ առաջի Աստուծոյ եւ սրբուհւոյ Աստուածածնին եւ առաջի քոյ, հա՛յր սուրբ, զամենայն մեղս, զոր գործեալ եմ: Քանզի մեղայ խորհրդով, բանիւ եւ գործով, կամայ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ. մեղա՛յ Աստուծոյ:

Մեղա՛յ Հոգւոյս եւ զօրութեամբ սորա, մտօքս եւ շարժմամբ սորա, մարմնովս եւ զգայութեամբ սորա:

Մեղա՛յ զօրութեամբ Հոգւոյս. խորամանկութեամբ, անզգամութեամբ, յանդգնութեամբ եւ երկչոտութեամբ, շռայլութեամբ եւ ժլատութեամբ, զեղխութեամբ եւ անիրաւութեամբ, չարահաւանութեամբ, յուսահատութեամբ եւ թերամտութեամբ. մեղա՛յ Աստուծոյ:

Մեղա՛յ չար խորհրդով մտացս. նենգութեամբ, ատելութեամբ, խեթիւ, մախախանօք, յաչախանօք, թուլութեամբ, պոռնկական խորհրդով՝ արուական, իգական, անասնական, գրաստական, գազանական ի գիշերի եւ ի տունջեան երազական գիճութեամբ եւ յանրջական գարշ աղտեղութեամբ. մեղա՛յ Աստուծոյ:

Մեղա՛յ ցանկութեամբ մարմնոյս. հեշտութեամբ, պղերգութեամբ, յօրանջմամբ քնոյ, շարժութեամբ մարմնոյս եւ զազրագործութեամբ ի պեսեպես ախտս, հեշտալրութեամբ լսելեացս, արատութեամբ աչացս, ցանկութեամբ սրտիս, իգութեամբ ոնգացս, պագշոտութեամբ բերանոյս, անժուժկալութեամբ, շուայտութեամբ եւ արբեցութեամբ. մեղա՛յ Աստուծոյ:

Մեղա՛յ չարաբանութեամբ լեզուիս. ստախօսութեամբ, սուտ երգմամբ, երգմնազանցութեամբ, հակառակութեամբ, վիճաբանութեամբ, բանսարկութեամբ, շոգմոգութեամբ, քսու

ղատարկաբանութեամբ եւ ծաղու, զրախօսութեամբ հերձախօսութեամբ եւ անիծաբանութեամբ, տրտնջելով, դժգոհելով, բամբասելով եւ հայհոյելով. մեղա՛յ Աստուծոյ:

Մեղա՛յ գողութեամբ ձեռացս. ագահելով, զրկելով, հարկանելով, սպանանելով եւ ընդ քարչս ածելով. մեղա՛յ Աստուծոյ:

Մեղա՛յ ամենայն յօղուածովք շինուածոյս եւ ամենայն անդամօք մարմնոյս, հնգեակ զգայարանօքս եւ վեցեկի շարժմամբս՝ վերամբարձ ոտնահարութեամբ եւ վայրաքարչ մեղկութեամբ, յաջ եւ յահեակ խոտորելով, զառաջնոցն մեղանջելով եւ վերջնոցն չար նշաւակ գոլով. մեղա՛յ Աստուծոյ:

Այլ եւ մեղա՛յ եօթնիցս հանցանօք մահացու մեղօք՝ հպարտութեամբ եւ մասամբք նորին, նախանձու եւ մասամբք նորին, բարկութեամբ եւ մասամբք նորին, ծուլութեամբ եւ մասամբք նորին, ագահութեամբ՝ եւ մասամբք նորին. որկրամոլութեամբ եւ մասամբք նորին բղջախոհութեամբ եւ մասամբք նորին. մեղա՛յ Աստուծոյ:

Այլ եւ մեղայ ամենայն պատուիրանացն Աստուծոյ՝ յանձնառելեացն, եւ հրաժարելեացն, զի ոչ զյանձնառականսն կատարեցի եւ ոչ ի հրաժարելեացն հեռացայ: Զօրէնս առի եւ յօրինացն հեղգացայ, ի կարգս քրիստոնէության հրաւիրեցայ եւ գործովս անարժան գտայ, գիտելով զչարն, կամաւ կորացայ եւ ի բարեաց գործոց ես ինձէն հեռացայ. վա՛յ ինձ, վա՛յ ինձ, վա՛յ ինձ: Զո՞րն ասեմ կամ զո՞րն խոստովանիմ, զի անթիվ են յանցանքն իմ անասելի են անօրէնութիւնք իմ, աններելի են ցաւք իմ, եւ անբժշկելի են վէրք իմ. մեղա՛յ Աստուծոյ:

Հայր սուրբ՝ զքեզ ունիմ միջնորդ հաշտութեան եւ բարեխօս առ միածին Որդին Աստուծոյ. զի իշխանութեամբդ որ տուեալ է քեզ, արձակեսցես զիս ի կապից մեղաց իմոց, աղաչեմ զքեզ: